

կամ բնաւին ուխտ եկեղեցւոյ հանդերձ պաշտօնէիւք եւ ժառանգաւորօք, որք անսայթաք պողոտայիւ ճանապարհորդեալք հասին առ յոյսն իւրեանց : Եւ արդ այսքան եւ յայսպիսի բարեվայելուչ եւ մեծափառ սրբոց զումարս բարէխօս աշխարհի եւ ապաւէն քաւութեան մեղուցելոց :

Զոր զիմեալ մեծաւ յուսով բարի արմատ եւ շառաւեղն հաւատարիմ Տէր Ազարիայն բանասէր եւ սպասաւոր բանին՝ կամեցաւ զայս աստուածային զիրս որ կոչի Կանոնագիրք եւ մեծաւ փափագանօք եւ սիրով ետ զբել զսա ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ հոգոյ, զոր ի վաղուց հեռէ փափագեալ ցանկացր լուսալրական եւ հոգիալուր մատենիս : Եւ մեք տեսաք զփափագ եւ զսէր նորա զոր ունէր առ հոգեւորն, ի միտ առեալ զբանն Եսայեայ որ ասէ, թէ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանեակ յԵրուսաղէմ վասն այն ուսոյն եւ տէրունական հրամանին սերտ սրտիւ եւ բոլոր հաւատով ետ զսա զբել :

Եւ արդ ես յետինս եւ յանարժանս ի մանկունս եկեղեցւոյ, թափառնիկս եւ յունայնս ի զործոց բարեաց, մեղապարտ Սիմէոն դպիրս, որ անուամբս միայն եմ, այլ զործովս հեռացեալ մեկուսի : Շնորհիւ Տեսառն սկսայ եւ ոգորմութեամբ նորին կատարեցի զսուրբ զիրքս որ կոչի Կանոնք, եւ է յոյժ պիտանի եւ անգիւտ, որպէս եւ առաջիկայդ ընթեռնելով իմասցիս, թէ որպիսի